ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 սեպտեմբերի 2025 թվականի N 439 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 20-Ի N 344-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, հիմք ընդունելով «Ախլաթյանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի 2025 թվականի սեպտեմբերի 17-ի գրությունը և «Ախլաթյանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության ծնողական խորհրդի 2025 թվականի սեպտեմբերի 12-ի թիվ 2 արձանագրությունը՝

ո ր ո շ ու մ ե մ.

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2024 թվականի սեպտեմբերի 20-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզային ենթակայության «Պետական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունների կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի անվանական կազմը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2021 թվականի մայիսի 21-ի N 235-Ա որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» N 344-Ա որոշման N 14 հավելվածում «Դավթյան Արուսյակ» բառերը փոխարինել «Ադոնց Աննա» բառերով:

2025-09-17 17:59:31 GMT+4
Հավաստված է ԷԿԵՄ-ի կողմից

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ՝ **Ռ.ՂՈՒԿԱՍՅԱՆ**

2025 թ. սեպտեմբերի 17

ք. Կապան